h.1634544
11-09-2025թ.
Նախընտրած ծանուցման ձևը՝
Էլ.փոստի միջոցով

Հասցեատեր՝ *Լոռու մարզպետարան*

Դիմող՝ *ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ՌԱԴԻՈԿԱՅԱՆ*
Հասցե՝ *ԼՈՌԻ, 2001, ՎԱՆԱՁՈՐ,*
ՏԵՐՅԱՆ Փ., 6, 19
karinesimonyan1@gmail.com : 37499616961

ՀԱՐՑՈՒՄ

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություններ.

Հարգելի պարոն Մկրտչյան, սեպտեմբերի 9-ին անցկացված ընդլայնված հանդիպման ժամանակ հայտարարել եք, որ «կոռուպցիան բնում խեղդելու եք»: Քանի որ հանդիպումը լրագրողների համար փակ է եղել և հնարավորություն չեմ ունեցել Ձեր այս հայտարարությունից ծագած իմ հարցերը ուղիղ տալու, հույս էլ չունեմ, որ առաջիկայում Դուք լրագրողների հետ հանդիպում կանցկացնեք, ուստի խնդրում եմ հարցերիս պատասխանել գրավոր ձևաչափով:

1. Որոնք են լինելու կոռուպցիան բնում խեղդելու Ձեր քայլերը:

2. Ինչ քայլեր եք ձեռնարկելու, որ կարծում եք՝ նախորդ մարզպետները չեն արել/վատ են արել/չի ստացվել/չի հաջողել:

4. Մինչև մարզպետ նշանակվելը եղել եք իշխող խմբակցության պատգամավոր, մշտապես մասնակցել եք մարզում տեղի ունեցող իրադարձություններին, հետևել եք աշխատանքներին: Կա՞ն արդեն Ձեզ համար տեսանելի կոռումպացված ոլորտներ, որտեղից հենց կսկսեք կոռուպցիան բնում խեղդելու Ձեր գործողությունները:

5. Արդյո՞ք Լոռու մարզի կոնկրետ կառույցներ/հիմնարկներ կան, որ արդեն իսկ գնահատել եք կոռումպացված ու նախատեսում եք կոռուպցիայի դեմ պայքարի Ձեր քայլերն սկսել հենց այդ կառույցներից:

6. Հատկապես կոռուպցիոն ինչ բնույթի հանցագործություններն են գերակշռում Լոռու մարզում:

7. Կոռումպացված լինելու մասին Ձեր հայտարարությունն արդյո՞ք վերաբերում է նաև հեղափոխությունից հետո նշանակված/ընտրված պաշտոնյաներին: Կա՞ն արդյոք Ձեր դիտակետում պաշտոնյաներ, որ առաջիկայում կազատվեն աշխատանքից, քանի որ Դուք տեղյակ եք նրանց կոռումպացված լինելու մասին:

Կանխավ շնորհակալություն հարցերին հանգամանալից և կետ առ կետ պատասխանելու համար:

Պատրաստ եմ վճարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանաչափը գերազանցող տեղեկության տրամադրման համար:

Դիմող՝

ԿԱՐԻՆԵ ՍԻՄՈՆՅԱՆ

h.1634712
11-09-2025թ.
Նախընտրած ծանուցման ձևը՝
Էլ.փոստի միջոցով

Հասցեատեր՝ *Լոռու մարզպետարան*

Դիմող՝ *ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ՌԱԴԻՈԿԱՅԱՆ*
Հասցե՝ *ԼՈՌԻ, 2001, ՎԱՆԱՁՈՐ,*
ՏԵՐՅԱՆ Փ., 6, 19
karinesimonyan1@gmail.com : 37499616961

ՀԱՐՑՈՒՄ

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություններ.

Հարգելի պարոն Մկրտչյան, սեպտեմբերի 9-ի Ձեր ելույթում հայտարարել եք՝ «քաղաքացու վճարած հարկերից ձևավորվող պետական և համայնքային բյուջեի միջոցները քաղաքացու համար հանրային բարիք, ոչ թե պաշտոնյայի համար անձնական հարստություն դիզելու միջոց են»:

1. Այս հայտարարությունը նշանակո՞ւմ է արդյոք, որ Լոռիում կան այնպիսի պաշտոնյաներ, որոնց համար պետական և համայնքային բյուջեի միջոցները անձնական հարստություն դիզելու միջոց են:

2. Այս հայտարարությունն արել եք նրանց հետագա կոռուպցիոն գործողությունները կանխելո՞ւ, զգուշացնելո՞ւ, թե՞ այլ նպատակով:

3. Ո՞ւմ, ո՞ր պաշտոնյաներին եք նկատի ունեցել այս հայտարարությունն անելիս:

4. Եթե կարծում եք, որ չկան, ապա արդյո՞ք Ձեր խոսքի այս հատվածը զուտ քաղաքական, պոպուլիստական հայտարարություն չէ:

5. Դուք շեշտել եք, որ այս նույն հայտարարությունն արել եք նաև հեղափոխական հարթակից և կրկնում եք արդեն 8 տարի անց: Ինչո՞ւ այն դեռ արդիական է: Արդյո՞ք սա չի նշանակում, որ Հայաստանում դեռ կան նման գիտակցումով պաշտոնյաներ, չնայած, որ ձեր քաղաքական ուժն իշխանության է եկել խոստումով, որ նման պաշտոնյաներ այլևս չեն լինելու:

6. Ինչո՞ւ իշխող քաղաքական ուժին չի հաջողվել արմատախիլ անել նման մտածողությունն ու գործելակերպը:

7. Ինչ եք կարծում, Վանաձորի համայնքապետի ԺՊ Արկադի Փելեշյանը, որ երեք տարի առաջ այս պաշտոնում նշանակվել է վարչապետի կողմից, համայնքային

բյուջեի հաշվին անձնական հարստություն դիզո՞ւմ է, թե՞ ոչ: Եթե այո, ապա ինչ կոնկրետ օրինակներ կարող եք ասել, արդյո՞ք այդ մասին տեղեկացրել/տեղեկացնելու եք իրավապահ մարմիններին, ինչո՞ւ է վարչապետը հարդուրժում և նրան աշխատանքից չի ազատում/ազատել:

8. Ինչ եք կարծում, արդյո՞ք նախկին իշխանությունների ներկայացուցիչները, որոնք հեղափոխությունից հետո Քաղաքացիական պայմանագիր կուսակցությանն են անդամակցել կամ սկսել ձեր կուսակցությանն աջակցել, արդյո՞ք համայնքային բյուջեի հաշվին անձնական հարստություն դիզելու ձգտումներ չունեն:

Կանխավ շնորհակալություն հարցերին հանգամանալից և կարճ ժամկետում պատասխանելու համար:

Եթե պատրաստ եք իմ այս և նախորդ հարցումների շրջանակներում հարցազրույց տալ, ապա ցանկալի կլինի հարցազրույցի տարբերակը:

Պատրաստ եմ վճարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանաչափը գերազանցող տեղեկության տրամադրման համար:

Դիմող՝

ԿԱՐԻՆԵ ՍԻՄՈՆՅԱՆ